#IDream ծրագիր – հատուկ Արցախից բռնի տեղահանված երիտասարդների համար

Հիմա՝ ավելի, քան երբեք անհրաժեշտ է կրթվել, ձեռք բերել նոր գիտելիքներ և արագ ու հնարավորինս քիչ կորուստներով ընդունել նոր իրականության մարտահրավերները: Մասնակցի՛ր IDream - Արցախցի երիտասարդների համար ծրագրին, ձեռք բեր բանկային ոլորտի տեսական և գործնական գիտելիքներ՝ հետագայում մեր թիմը համալրելու հեռանկարով:

Ծրագրի տևողություն՝	2-3 ամիս,
Ծրագրի անցկացման վայր՝	Բանկի բոլոր մասնաճյուղերում
Հայտարարության սկիզբ՝	Սեպտեմբերի 26, 2023թ.
Հայտարարության ավարտ՝	Հոկտեմբերի 20, 2023թ.

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

IDream ծրագիրը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր երիտասարդի ձեռք բերել տեսական և գործնական մի շարք գիտելիքներ վաճառքի, սպասարկման ոլորտում, ինչպես նաև ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ բանկային գործում:
IDBank-ի կողմից կազմակերպված նմանատիպ կրթական ծրագրերի արդյունքում վերջին 3 տարիների ընթացքում մեր թիմը համալրվել է շուրջ չորս տասնյակ սկսնակ մասնագետներով, ովքեր իրենց կարիերան սկսել և շարունակում են IDBank-ում:

Ծրագիրը նպատակ ունի.

- սկսնակ մասնագետներին տրամադրել տեսական գիտելիքներ ֆինանսավարկային ոլորտի վերաբերյալ,
- զարգացնել հմտություններ, որոնք անհրաժեշտ են բանկային ոլորտում սկսնակ աշխատակցին,
- ծրագրի մասնակիցներին ներսից ծանոթացնել Բանկի գործունեությանն ու կորպորատիվ մշակույթին,
- ծրագրի լավագույն մասնակիցներով համալրել Բանկում սկսնակ մասնագետների թափուր հաստիքները:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է՝

- լինել բակալավրի կամ մագիստրատուրայի կամ նորավարտ ուսանող
- ունենալ ցանկություն ու մոտիվացիա կարիերան սկսելու թվային բանկինգի ոլորտում,
- ունենալ հաղորդակցման լավ հմտություններ,
- և **ամենակարևորը՝** լինել նախաձեռնող, ստեղծագործ ու նորարար գաղափարներով և ոգևորությամբ լի:

Եվ այսպես, եթե քեզ տեսնում ես բանկային և թվային ոլորտում, ապա օգտագործի՛ր հնարավորությունդ և միացի՛ր IDBank-ի կրթական ծրագրին:

Ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է **hr@idbank.am** հասցեին ուղարկել CV կամ կոնտակտային տվյալներ կապ հաստատելու համար: